

ՀՀ Վայոց ձորի մարզպետ Հարություն Մարգարյանի շնորհավորական
ուղերձը Սոցիալական աշխատողի օրվա առթիվ



Վայոց ձորի մարզի սոցիալական ոլորտի հարգելի՛ աշխատողներ: Շնորհավորում եմ ձեզ մասնագիտական տոնի առթիվ: Կարևորելով սոցիալական աշխատանքի անհրաժեշտությունը և այդ գործում ձեր ունեցած դերն ու տարիների փորձը, մաղթում եմ նվիրվածությամբ ունենալ աշխատանքին, ուժ ու աշխատանքային կորով, սոցիալական մարտահրավերներին դիմակայելու և դրանք հնարավորինս հեշտությամբ հաղթահարելու գործում: Համոզված եմ, որ մարզում սոցիալական լարվածությունը անվագեցման գործում դուք ձեր նպաստն էք բերում մեր մարզի տարեցների նկատմամբ դրսևորած հոգատարությամբ, հասարակության խոցելի խմբերին նեցուկ լինելու, մարդկանց ցավերին ապրումակցելու և հոգսերը փարատելու ձեր կարողությամբ: Հաջողությունն ու ձեռքբերումներն ավելի արդյունավետ կարող է լինել մասնագիտական խմբերի համախմբվելու և համագործակցաբար աշխատելու պայմաններում: Ուստի սոցիալական աշխատողի առաքելությունը՝ սոցիալական աջակցության ծառայություններ մատուցելու գործընթացն իրապես որակական բարձր մակարդակով կատարելու համար պետք է ներդնել մեծ ջանքեր ու համատեղել սոցիալական ոլորտի բոլոր աշխատակիցների, ոլորտի վետերանների հարուստ կենսափորձը, գիտելիքներն ու հմտությունները, իշահ մեր մարզում ապրող միայնակ տարեցների, սոցիալապես անապահով ընտանիքների, հաշմանդամություն ունեցող անձանց: Հարգելիներս, մասնագիտական տոնի կապակցությամբ շնորհավորում եմ մարզի սոցիալական ոլորտի բոլոր աշխատողներին և մաղթում եմ առողջությունն, աշխատանքային նորանոր ձեռքբերումներ, անձնական երջանկություն: Թող ձեր նվիրական աշխատանքի արդյունքում արժանանաք երախտագիտական վերաբերմունքի ու շնորհակալական խոսքերի: